

հարկադրուեցաւ նահանջել եւ բանակեց մայիս 22-ին Գոնդ գիւղի մօտ, Ղարաքիլիսէն 40 քիլոմետրի վրայ դէպի հիւսիս-արեւելք:

Զօր. Նազարբէկեան, օգտագործելով ունեցած յաջողութիւնը եւ զօրքերու բարձր տրամադրութիւնը, հակառակ իր աջ թեւին ըստանացող վտանգին, շարունակեց յարձակողականը, ջանալով շրջապատել թուրքերու աջ թեւը: Յարձակողականը յաջող կ'ընթանար. ու մայիս 26-ի երեկոյեան դէմ հայերը, վար նետելով թշնամին Գեաղա-Մայմեխ լեռէն, զբաւեցին Հաճի-Գարա գիւղը, իսկ աջ թեւի վրայ՝ Բեզորգալը:

Գժբախտաբար այս յաջողութիւնը յարատեւ չէր. մայիս 27-ի լուսարացին թուրքերը հակադարձակումով ետ առին Գեաղա-Մայմեխը: Միաժամանակ երեւան հանուեցաւ յառաջխաղացումը երկու թուրքական զօրանիւներու. մէկը, բաղկացած 3000 հոգիէ 6 թընդանօթով, կը շարժէր Գիւլագարակ գիւղէն դէպի Բեզորգալ, ուր հայերու աջ թեւը կը պաշտպանէր Ղարաքիլիսէի ճամբան. իսկ միւսը, 1500 հոգինով, Համամլուէն կ'ուղղուէր հայկական ջոկատի ճակատին դէմ:

Մայիս 27-ի երեկոյեան թուրքերը տիրեցին Բեզորգալին, եւ ջոկատը ստիպուած եղաւ նահանջելու արեւելեան ուղղութեամբ դէպի Ահմետաղիւրտ լեռը. ասոր վրայ կեդրոնն ալ քաշուեցաւ Ղըշյաղ գիւղի մօտ: Բայց հարկ եղաւ այս գիւղը եւս պարսել, վասնզի թուրքերը շուրջառիկ շարժումով հայոց ձախ թեւի կողմէն՝ մայիս 28-ին ելան Վարդանյու գիւղի մօտ Ղարաքիլիսէն պաշտպանող ջոկատի կրոնակը: Ջոկատը հարկադրուեցաւ նահանջել դէպի Շահալի կայարանը ու անկէ լեռնային ճամբաներով շարժիլ արեւելեան ուղղութեամբ: Մայիս 28-ին ջոկատը գիրք բռնեց Բողդիւղ եւ Նիկիտինօ գիւղերու մօտ, նորէն փակելով թուրքերու առջև Նրեւանի ճամբան:

Անդրանիկը մայիս 30-ին անցաւ Դիլիշան:

Այս կացութեան մէջ Հայկական Զօրամարմնի մասերը ծնացին մինչեւ յունիս 4-ը, երբ ստորագրուեցաւ հաշտութեան պայմանագիրը: Իսկ Անդրանիկը, այդ պայմանագիրը ամօթալի նկատելով, յունիս 6-ին մեկնեցաւ Նոր Բալագիւ-Նախիջևանի ուղղութեամբ:

(Շարունակելի)

ՎՐԱՑԻ ՄԵՆՇԵՒԻԿՆԵՐԸ ԵՒ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԶՕՐԱՎԱՐՆԵՐԸ

Գրեց՝ Ս. ՄԱՍՈՒՐԵԱՆ

ՄԱՍԿՈՒԱՑՈՒՄ հրատարակում է «Կրասնիյ Արխիւ» անունով երկամսեայ մի հանդէս՝ Պորճրգային Ռուսաստանի Կենտրոնական արխիւի պաշտօնաթերթը, որ զբաղւում է բացառապէս ազատագրական շարժումներին նուիրուած պատմական նիւթերով:

Նրա վերջին՝ 21-րդ համարում գետեղուած են մի շարք գրութիւններ, որոնք վերաբերւում են Վրաստանին եւ որոնք, սակայն, մեծ շահեկանութիւն ունին եւ մեզ համար: Դրանք 9 արձանագրութիւններ են Վրաստանի կառավարութեան նախագահ Ն. Ժորտանիայի փոխանորդ Ե. Գեդեզկորիի ունեցած խօսակցութեանց անդլիական զօրավարների հետ, 1919 թ. -ին եւ մի յուշագիր ուղղուած Լիւցերնի խորհրդատուի վրայ ընկերվարական

պատուիրակութեան կողմից Համայնքների պալատի բանուորական հատուածին:

Ինչպէս ասում է «Կրասնիյ Արխիւ»ի խմբագրութիւնը, դրանք պատահական սրբաբանքներ են մենչեւիկեան Վրաստանին վերաբերուող վաւերագրերից. ամբողջ արխիւները վրաց կառավարութիւնը իր հետ տարել է արտասահման: Վրաստանում մնացել է միայն որոշ մասը արտաքին գործոց եւ զինուորական նախարարութեանց արխիւների, ինչպէս նաեւ մի մասը Ա. Չիսնկելիի անձնական արխիւի:

Հրատարակուած նիւթերը շատ են հետաքրքրական. այդ պատճառով եւ թոյլ եմ տալիս ինձ, ըստ կարելւոյն, ամբողջական ձեւով առաջ բերել այդ նիւթերը «Հայրենիք» ամսագրի մէջ: